

«Էս օր իմ նարս տէ՛համ⁽¹⁾, թաքուն⁽²⁾ էր,
Ուղեցիմ, արի, շուտով զիմ, այր, սէ
[*(զաս)*].

Թէ՛ դաս, չեմ ընայ⁽³⁾ քաշել ցաւերդ,
Սիրականի համար ես լին, այր, սէ
[*(լաս)*]:

Լաս, աչքերիդ արսունքն⁽⁴⁾ սելաւ⁽⁵⁾ ա,
Ինձ տնէ հանեց էջիւդ⁽⁶⁾ ալաւը.

Ալ զումաշ ի⁽⁷⁾ վերիդ խաղած⁽⁸⁾ խալա-
[*(լը)*],

Քանց բլբլիւի կը կայնես դա, այր, սէ
[*(դաս)*]:

Դասդ կանես դու ինքդ համաշայ⁽¹⁰⁾,
Սիրականս է լաւ զալամդաշայ.

Քեամալու հետ խօսա՛, լեզուն անուշ ա
Որ ես ու դու բռնենք բէն, այր, սէ
[*(բաս)*]:

Աշուղի այս եւ միւս երգերը ցայտուն
դաղափար են տալիս նրա բանաստեղծա-
կան ձիրքի եւ գործունէութեան մասին,
որ սերտօրէն կապւած է հայ աշուղական
արւեստի զարգացման հետ:

Ը.

ՍԷՓԱՆ ՕՂԼԻ ՂՈՒԼ ՂԱԶԱՐ

Թէ՛ ո՛ւր է ծնւել աշուղ Սէփանը, ի՞նչ
գործունէութիւն է ունեցել, ի՞նչ դաղա-
փարներ է արծարծել եւ ո՞ր դասակարգի
զաղափարախօսն է, փաստական տեղեկու-
թիւններ, դժբախտաբար, չկան: Այսքանը
բացորոշ է, որ նա 80ական թւականին
ապրել ու գործել է Իրանի Սպահան նա-
հանգի Փէրիա գաւառի Սանգիբարան գիւ-
ղում, ինչպէս այդ ցոյց է տալիս նրա սի-
րային մի երգի ներքեւում նշանակւած
1885 թւականը: Իսկ նրա մի այլ սիրերգից
երեւում է, որ նա ունեցել է ուրախ բնա-
ւորութիւն եւ քաղցր ձայն, ինչպէս ինքն
է յիշատակում.

«Էս քանի տող եղանակն քաղցր ձայ-
նիւս երգեցի...»:

Այդ առանձնատկութիւնների համար

էլ նա շատ է սիրւել իր ժամանակակից
հասարակութիւնից եւ յաճախ հրաւիրւել
է «մէջլիսներում», ուրախացնելու համար
հանդիսականներին: Սակայն, բացայայտ
չի երեւում, թէ՛ արդեօք նա սոսկ երգո՞ղ
էր, թէ՞ միեւնոյն ժամանակ աշուղական
գործիքի վրայ նւազող: Բայց նկատի առ-
նելով իր զուլ կոչումը, որ սովորաբար
աշուղներն են կրում, կարելի է հետեւցը-
նել, որ նա եղել է նաեւ սաղի կամ չօնգու-
րի վրայ նւազող աշուղ:

Սէփանը գրել է բոցավառ մօտիւնե-
րով, որ գլխաւորապէս յատուկ է արեւել-
եան բանաստեղծութեան:

Նրա քնարից մեզ հասել է երկու սի-
րերգ. ա) «Նստած ի մէջլիսի մէջը» եւ բ)
«Զառ ոսկէ քուփ», որոնք արձանագրւած
են Թեք Սէր Կարապետի «Դավթարում»:
Դրանցից առաջինի մէջ Ղազարն նկարել է
իր սիրածի պատկերը: Նա իր «Գեօղալ»ին
հանդիպում է «մէջլիսում» եւ զգայուն
սիրտը շղթայւում է նրա սիրով: Այնու-
հետեւ գեղջուկ կոյսը դառնում է նրա ի-
գէալը եւ նա իր քնարը նւիրում է իգէալ -
եարին եւ երգում նրա գեղն ու հրապոյրը:
Իր սիրուհու գեղեցկութիւնը նա մրձիւնում
է արեւելեան այնպիսի պատկերաւոր գոյ-
ներով եւ բեղուն համեմատութիւններով,
որ, ասես, նա կենդանի պատկերանում է:
Ահա նրա մետաքսէ մաղբը, որ հիւսել եւ
դրել է ուսերին, սատաֆի նման ճերմակ
ճակատը, որ զարդարւած է պայծառ խա-
լերով, գեղեցիկ յօնքերը, որոնք քաշւած
են «զալամօլ», զուլալ, երազուն աչքերը,
վարդաթեր շրթունքները, մարգարտաշար
ատամները, քաղցրախօս-բլբուլ բեղուն,
որ անոյշ խօսքեր է արտաբերում եւ այլն:
Նա մի այնպիսի գեղեցիկ նկար է, որի սի-
րոյ կրակն ո՛ւմ սիրտն առնում է, «վեր
ընկնում բիհալ է լինում»: Եւ այդ «պատ-
ուական» եարը նստում է երգչի մօտ,
քաղցր զրուցում, խնդում, ծիծաղում,
կատակներ անում, ապա մի գոյգ նարինջ
է նւիրում: Երգիչն անհունապէս ուրախա-
ցած՝ հնչեցնում է սաղը եւ նրա դուլա-
սանքը երգում.

«Նստած ի մէջլիսի մէջն,
ընտել մի գեօղալ էր տեսայ,
Ականեցի գլխի մաղին,

ապրչումէ ծալեր տեսայ,
Եւ թափուղի թէլի նման՝

գլխին չաթր տալէր տեսայ,
Հուսել էր, գցի ուսերին՝

ոսկէ փաթութ գալէր տեսայ,
Ճակտն ճերմակ սատաֆ էր,

վերէն պայծառ խալեր տեսայ.
Ընքներն զալամօլ քաշաց,

աչքերն զուլալ էր տեսայ,
Ես մին էդպէս զարմանալի

գեղեցիկ գեօղալ էր տեսայ,
Ականեցի, մաթոյու ելայ,

սիրահարված մշուշ ելայ,
էջիւ շօշէն կրակի պէս

առաւ սրտիս, բիհուշ ելայ:
Քինթն դամբաղի զօնչայ էր,

պոռններն վարդի թեր էր,
Ատամունքն բոլորովին

դուլթաթի մարգարտաշար էր,
Լեզուն քաղցրախօս բլբուլ էր,

անոշ խօսկեր կարտաբերէր,
Նրա լաւ, քաղցր խօսկերին

մարդ կուղէր որ թաղաթ բերէր,
Անոչահամ զրուց տալն շատ

մարդկանց մօտ կը բերէր,
Բասկի պատուական գեօղալ էր,

ո՛վ կարէր տնտղէր, համբերէր
էջին ում սրտին որ առաւ,

վեր ընկաւ, բիհալ էր տեսայ,
Գեօղալին թամաշայ արի,

խելքիցս ելայ սարսարի,
Երանի կտամ էն մարդին,

որ արժան է էդպէս նարի:
Ուսերի ձեն լաւ կերպին,

շատ գեղեցիկ տեսարան էր,
Ղուլթաթի փարկեալօվ շինած

կունքն չափաին նշան էր:
Արմուկներն աստուածաշէն

տանձի պէս թափոծի բան էր,
Մատունքներն կարմրագոյն

մին լուսակալ վառարան էր,
Եղունկներն գուլէրմանու

նոր բացուած բալկի նման էր,
Թէ՛ որ իւր ծծերն բանէր՝

ո՛վ կարէր նորանց ականէր,
Ես նայելոյ թաղաթ չունի,

չթողի որ դօշն բանէր,
Յետոյ ծիծաղաց, իմացայ

ինձանից խօշալ էր տեսայ.
Օ՛, իմացայ, ինձի սիրում էր,

իրան ինձի մօտ բերում էր,
Երբոր ես խօշթար ի անում,

լաւ հավասով համբերում էր:
Ականեց մեղի, ծիծաղաց,

յետոյ եկաւ մօտիս խաղաց,
Ասի՛ եարիս մհլամ արա՛,

սիրտս քո սէրիցն դաղաց,
Ինձի համար մին ջուխդ նարիջ

պահել էր ծոցում գաղաց,
Հանեց, բերեց տվեց ինձի,

խօշթափ արաւ, շատ ծիծաղաց,
էջին ինձի քաշեց, տարաւ,

ինչպէս մին ծառայ դողդողաց,
Սէփան օղլի դուլ Ղազարի

սիրտն ցնծալով գողդողաց.
Ես էլ իւր դովասանքն ասի,

ինձէն շնորհակալ էր տեսայ,
Շնորհալի լաւ խաթուն էր,

նաջիր ու հալալ կաթ ունէր,
Ակնեղէն վզում շարաց,

միջումն գոված սաթ ունէր»:

Երկրորդ սիրերգը հովուերգական մի
սիրուն պատկեր է, որի մէջ աշուղը վառ
գոյներով տալիս է մեզ հայ գեղջկուհիներ-
ի սարքած խնջոյքի նկարագրութիւնը:
Աշուղական գրականութեան մէջ հետա-
քրքրական մի էջ է դա: Այնտեղ պատկե-
րանում է գեղջկական պարզ կեանքը: Ա-
հա «զառ ոսկէթուփ» զարդարանքով պըճ-
նրւած գեղջուկ «խաթունանին»: Նրանք
համախմբում են գլուղի «նորատունկ» այ-
գեստանում եւ պարզ ու համեստ մի խըն-
ջոյք սարքում: Նրանց սեղանը զարդար-
ւած է ամէն տեսակ մրգեղէններով եւ ա-
նուշ գինիով: Սեղանի շուրջ նստել են
«սաղանդարները» եւ քաղցր եղանակով
հնչեցնում են փողն ու դափը, խսկ գեղջ-

1. Տեսայ: 2. Գաղտնի: 3. Կարող: 4. Արցունք: 5. Հեղեղ: 6. Սէր: 7. Կերպաս է: 8. Հագած: 9. Հագուստ: 10. Շարունակ, միշտ:

կուհիները «սակեթուի ծամերը թիկնամի-
ջերին կապած», պարում են եւ ոստոս-
տում կաքաւի պէս: Կանչում են նաեւ ա-
շուղին եւ պատիւ տալիս: Աշուղն էլ քաղ-
ցըր ձայնով դուրն է երգում:

«Ձառ սակեթուի դարդարանքով
դարդարեցին խաթունանին,
Նորատունկ ալքեստանի մէջ
ժողովեցին խաթունանին,
Բարեւի սեղան մօտ բերին,
պատրաստեցին խաթունանին,
Կերան, լիացան, քէֆ արին,
պար բռնեցին խաթունանին,
Կաքաւի պէս լաւ պար եկան,
ոստոստեցին խաթունանին:

Սաղանթարները նստած են,
փող են փչում, դափ են տալիս,
Խաթունանին ողջ պար դալով
թեւ են փռում, ծափ են տալիս,
Ոսկեծուփ ծամերն հուսաց
թիկնամիջի կապ են տալիս,
Շարունակ ժամ դալով, իրանց
կոտրատելով թափ են տալիս,
Հավասով թամաշայ ունէր,
դոր պարեցին խաթունանին:

Դորանց պար դալոյ օրերն
Հավասով թամաշայ կուղէ,
Նորանց նաղերի քաշողն
խան ու սուլթան, փաշա կուղէ,
էս գովելի տեսարանին
լաւ հավասով նաշա կուղէ,
Ամենայն տեսակ մրգեղէն,
էտն դինով շուշայ կուղէ,
Իմ գովասանքի խօսկերն
ընդունեցին խաթունանին:

Ինձի կանչեցին, ուղեցին,
յօժար կամօք ես դնացի,
Ուրախ պար դալոյ օրեր էր,
Իւրեանց գովասանքն ասացի.
Իւրեանք էլ ինձ պատիւ տվին,
եւ էլ ցնծալով խնդացի,
էս քանի տող եղանակն
քաղցր ձայնիւս երգեցի,

Սէփան օղլի դուլ Ղազարին
լաւ պատուեցին խաթունանին,
Նորանցից պատիւ ստացայ,
ինձի սիրում են, հասկացայ,
Գինի տվին, ևս խմեցի,
անձամբս բոլոր ցնծացայ»:

Այս երգերը վկայում են, որ դուլ Ղա-
զարն եղել է աշուղական ձիրքով օժտուած
իր ժամանակի յայտնի երգիչներից մէկը,
իսկ թէ ո՞ր տան փոշիների ներքոյ են
դառնում նրա միւս անտիպ երգերը, մեզ
յայտնի չեն: Ժամանակը եւ բանասիրա-
կան նորանոր պրպտումները, թերեւս, մի
օր յայտնաբերեն աշուղական արեւստի
այդ թանկագին փշրանքները:

Թ.

ՏԱՂԱՔԱՆ ՏԷՐ ԵՍՍՅԻ

Անյայտութեան խաւարում մնացած
տաղասաց-երգիչներից մէկն է Տէր Եսա-
յիւն, որի ստեղծագործութիւնները մինչեւ
օրս էլ մնում են փոշիների ներքոյ ընկած
ձեռագիր տաղարանների էջերում եւ դեռ
չեն յայտնուել հայ բանասիրական գրադա-
նութեանը:

Այդ երգերից մեր գրական արխիւում է
դառնում «Գանգատ ունեմ» խորագրով
քնարական տաղը, որ 1920 թւին նւիրել է
մեզ հանդուցեալ Եղնիկ Ծ. Վ. Երկարա-
կեցեանը, թղթի ներքեւում աւելացնելով
հետեւեալը. «Այս կտորը Ձաքարիա քա-
հանան կամ անդիր է իմացել եւ կամ ա-
շուղ Եսայի տետրակներից է ունեցել իւր
կամ իւր ծանօթ բարեկամների մօտ եւ ո-
րոնցից արտագրել է ինձ համար: Եսայի
երգիչն ինձ թւում է Քեաղաղ դաւառից է:
Խորհրդատուների է դիմել այս երգչի որդի-
ներին կամ ազգականներին, ընդ որս եւ
Ձաքարիա քահանայի (արտագրող) թո-
ռան Մարտիրոսին, որ այժմ պէտք է Ադ-
նա դիւղը կամ Սուլթանաբադում լինի,
յայտնադործելու համար երգչի աշուղա-
կան արժէքաւոր գրվածքները»: Հէնց
այդ նպատակով պէտք եղած դիմումները

կատարեցինք, բայց, դժբախտաբար, դը-
րական արդիւնք չստացանք: Այժմ այս-
քանը միայն պարզ է, որ Տէր - Եսային
մէկն է իր ժամանակի տաղանդաւոր տա-
ղերգուներից, որը մտաւորապէս աւելի
բարձր կանգնելով իրեն շրջապատի ժողո-
վրդից եւ օժտուած լինելով բանաստեղ-
ծական ձիրքով, իր հիւսած տաղերով աղ-
դել է իր ժամանակի մարդկանց հոգիների
եւ զգացումների վրայ եւ վայելել է նրանց
սէքն ու յարգանքը:

Երգիչն ապրել է եւ ստեղծագործել
մեզանից մի դար առաջ՝ Իրանի Քեաղաղ
դաւառում: Դա Պարսկաստանի Սպահան
նահանգի հայաբնակ դաւառներից մէկն է,
ուր այժմ ապրում են Ժէ. դարում Շահ-
Արքայի ձեռքով տարագրւած գեղացիու-
թեան բեկորները: Ահա այդ գեղջուկ ժո-
ղովրդի հարազատ դաւակն է տաղարանը,
որ կոչւում է Տէր-Եսայի, ինչպէս ինքը
յիշատակում է իր երգի վերջին տան մէջ.

«Տէր-Եսայի յետիւզ բաժինն ի՛նչ ունես,
Շաղաղւած աշխարհիս մեղքի հետ ես
[դու]:»

Մարդկային սրտի տարբեր ապրումները
նկարող մի յաջող պատկեր է լիրիկական
այդ ոտանաւորը, որ դրաւիչ է ո՛չ միայն
իր դեղարեւստական պարզ, անպաճոյճ
կառուցւածքով, այլեւ հոգեբանական
հիւսւածքով: Այդ տեսակէտից «Գանգատ
ունեմ»ը հայ աշուղական գրականութեան
մէջ մի արժէքաւոր տաղ է:

Ընդգծենք եւ այն, որ երգիչ Տէր-Եսա-
յին իր երգին տւել է հին հայ տաղասաց-
ների տաղերի նկարագիրը եւ դուրք կար-
դալիս այն տպաւորութիւնն էք ստանում,
որ դա աւելի միջնադարեան մի տաղի մը-
նացորդ է, քան աշուղական ստեղծագոր-
ծութիւն:

Այնտեղ երգիչը դանդաղութեամբ է իր «նա-
ղելի սրտից», որ օր ու գիշեր տանջում է
իրեն, մշտապէս փոխելով իր ներքին աշ-
խարհը, իր հոգեկան տրամադրութիւն-
ները: Այսպէս՝ տաղասացի սիրտը մի ժամ

քաղցրանում է սառն աղբիւրի պէս, մի
ժամ դառնանում, դառնում է լեղի: Մի
ժամ ծիծաղում է, մի ժամ լաց լինում:
Մի ժամ թեւեր է առնում եւ բարձրանում
«սրընթաց դուլի» նման, մի ժամ հոդի
պէս հանդարտում: Մի ժամ «էրւած խո-
ցի» նման կսկծում, մի ժամ չարանում է,
սրած նետ դառնում: Եւ այդպէս չարու-
նակ յուզում, ալեկոծում եւ փոթորկում
է երգչի կեանքը: Նա, կարծես, այդ ծանր
կացութիւնից ազատելու նպատակով դի-
մում է սրտին եւ պատկերաւոր համեմա-
տութիւններով դանդաղութեամբ.

«Գանգատ ունեմ քեզնից իմ նաղելի սիրտ,
Մին ժամ պղտորում ես, դառնան(1) դետ
[եւ դու,

Մին ժամ քաղցրանում ես, մի սառն աղ-
[բիւր ես,
Մին ժամ դառնանում ես, լեղւի պէս ես
[դու:

Մին ժամ ծիծաղում ես, մի ժամ ես լա-
[ւում(2)

Մին ժամ թեւ ես առնում, աշխարք ման
[դալում(3).

Մին ժամ հարցանողաց ջուղար(4) չես
[տալում,

Մին ժամ քարոզատուր վարդապետ ես
[դու:

Մին ժամ բարձրանում ես, սրընթաց դու-
[լի(5) պէս.

Մին ժամ խոնարում ես, հանդարտ հոդի
[պէս.

Մին ժամ կսկծում ես, էրւած խոցի պէս,
Մին ժամ չարանում ես, սրած նետ ես
[դու:

Մին ժամ պարծենում ես, սուլթան ու
[խան ես,

Մին ժամ աշխարքիցս դու բիզուման(6)
[եւ.

Մին ժամ բռնվում ես, մութ ու դուժման(7)
[եւ,

1. Գարնան: 2. Լալիս: 3. Գալիս: 4. Պատա-
խան: 5. Թոչուն: 6. Անտեղեակ: 7. Մէգ, մշուշ,
մառախուղ:

Մին ժամ արեգակն լուսի պէս եւ դու:
Զօր ու զիշեր միշտ տանջում ես, քուն
[չունես,
ի՞նչ անեմ, որ յաւիտենից տուն չունես:
Տէր Եսայի յետիւժ բաժինն ի՞նչ ունես,
Շաղաղած աշխարհիս մեղքի հետ ես
[դու»:

Թէ Տէր-Եսային, որպէս երգիչ-տաղա-
բան, հասարակական ի՞նչ գործունէու-
թիւն է ունեցել եւ իր քնարի լարերի վրայ
ի՞նչպիսի բովանդակութեամբ երգեր է
հնչեցրել, փաստական տւեալներ, դրժ-
բախտաբար, չկան. այդ էական հարցերը
հնարաւոր կը լինի լուսաբանել, երբ փո-
շինների տակ մնացած տաղարաններից մի
գեղեցիկ օր երեւան կը գան երգչի միւս
անտիպ տաղերը:

Բացի ընդգծած աշուղներից, մեր դը-
րական արխիւում գտնւած 1870 թւակա-
նի ձեռագիր մատենանում կան մի շարք
անյայտ երգիչներ - Տէր Եսայի, Սէփան
օղլի զուլ Ղազար, զուլ Սարգիս Շրիշկան-
ցի եւ ուրիշներ, որոնք նոյնպէս կարօտ են
ուսումնասիրութեան: Յարմար առիթով
այդ աշուղների կերպարները եւս կը պատ-
կերենք եւ նրանց ստեղծագործութիւննե-
րը կը վերլուծենք: Դա անհրաժեշտ է մա-
նաւանդ այն առնչակէտից, որ միայն նման
աշխատանքով հնարաւոր է գրել աշուղա-
կան գրականութեան լրիւ պատմութիւնը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

29 Օգոստոս 1957

Ռաշտ

ԵԱԳՈՒՊԻ ԱՐԱՐ ՊԱՏՄԱԳԻՐԸ

եի

ՀԱՅԵՐԸ

(Շար. տե՛ս Բազմ. 1957, թ. 11-12, էջ 262)

25.

Ապտմէլիֆ Խան Ճահիաֆ Աս Սուլամի
կը բռնանայ Հայաստանի

198ին (813) Ալ-Մամուն զրկեց Ալ-Հա-
սան Իպն Սահլ դէպի Իրաք եւ ուրիշ տե-
ղեր՝ կառավարիչի հանգամանքով: Արդէն
Ալ-Մաֆար՝ որ ծանօթ էր Ապուս-Սարա-
յիս անունով, իսկ բուն անունն էր Աս-
Սարի Իպն Մանսուր Ալ-Շալաբանի, ապրս-
տամբած էր Քուֆայի մէջ՝ հետն ունենա-
լով Մոհամմէտ Իպն Իպրահիմ Ալ-Ալա-
ուի (Ալիի ընտանիքէն), որ ծանօթ էր
Իպն Թալաթըպա անունով: Յետոյ երբ
վախճանեցաւ Մոհամմէտ Իպն Իպրահիմ,

Ապուս-Սարայիս տեղը կարգեց Մոհամ-
մէտ Իպն Զայտ ու Ալ-Ապպաս Իպն Մո-
համմէտ Իպն Մուսա Ալ-Ճաֆարի ու գը-
րաւեց Պասրան:

Զայտ Իպն Մուսա Իպն Ճաֆար Իպն
Մոհամմէտ եկաւ Քուֆայէն, ուր չէր ու-
ղած հնազանդիլ (Մամուն խալիֆային):
Պասրա գնաց, Ալ-Ապպաս Իպն Մոհամմէտ
Ալ-Ճաֆարիի հետ. իսկ Մոհամմէտ Իպն
Էլ-Հասան՝ որ ծանօթ էր Աս-Սըլք անու-
նով, գրաւեց Ուսսըթ քաղաքը: Իպրահիմ
Իպն Մուսա Իպն Ճաֆար գրաւեց Եմէնը,
իսկ Մոհամմէտ Իպն Ճաֆար առաւ Հի-
ճաղը:

Մծբինի եւ չըջականերուն տիրեց [Ահ-

մէտ Իպն] Օմար Իպն Ալ-Խաթթապ Ար-
Բապիլի: Մուսուլի՝ Աս-Սալլա Իպն Անս,
իսկ Նիքիլեքտի՝ Մուսա Իպն Ալ-Մուպա-
րաք Ալ-Եաշթարի:

Հայաստանի տիրեցին Ապտմէլիք Իպն
Ալ-Ճահաֆ Աս-Սուլամի ու Մոհամմէտ
Իպն Ադդապ: Ատրպատականի՝ Մոհամ-
մէտ Իպն Ար-Բաուսա: Ալ-Աղատի եւ Եզիտ
Իպն Պալալ Ալ-Եամանի եւ Մոհամմէտ
Իպն Համիտ Ալ-Համաուանի եւ Օթման
Իպն Աֆթալ եւ Ալի Իպն Մըռ Աթ-Թա-
յի(36):

Եագուպի, Բ. 539-540

26.

Ալ-Մամուն եւ Հայեքը

Ալ-Մամուն (813-833) Հայաստանի ու
Ատրպատականի վրայ կառավարիչ կար-
գած էր Թահըր Իպն Մոհամմէտ Աս-Սան-
յանի: Ուրիշներ կը պատմեն թէ զինքը
ղրկողն էր Հարթհամա Իպն Այեան Համա-
տանցին՝ մինչ դէպի Իրաք կ'երթար: Թա-
հըր գնաց Ատրպատականի վարդանակերտ
քաղաքը. գրեց Հայաստանի զօրավարնե-
րուն ու անոնց երեւելի զինուորականնե-
րուն, եւ անոնք հպատակութեան երդում
ըրին Մամունի:

Ամինի կողմէն Հայաստանի կառավա-
րիչն էր՝ Իսհակ Իպն Սիւլէյման, որուն
հետ կային Օմար, Ալ-Հուզուն, Ներտեհ,
Ապտիլուհաման՝ Աղուաններու իշխանը եւ
շատ իշխաններ: Իսհակ ուղղուեցաւ դէպի
Պարտաւ՝ բնակիչներուն վրայ յարձակե-
լու համար, որովհետեւ իր որդին դուրս
հանած էին:

Թահըր անոր զրկեց Զահիր Իպն Սինան
Ալ-Դամիմի՝ մեծ բազմութեամբ: Իրարու
հանդիպեցան եւ ամբողջ օրը պատերազ-
մեցան: Յետոյ պարտուեցան Իսհակ Իպն
Սիւլէյման ու անոր ընկերները, իսկ անոր
որդին՝ Ճաֆար Իպն Իսհակ Իպն Սիւլէյ-
ման գերի բռնուեցաւ: Թահըր [զրկեց

(36) Վարդան, ԽԱ. էջ 77, 78:

դայն] եւ հետը գտնուող զերիները՝ Մա-
մունի: Բայց շատ օրեր չանցած՝ Թահըր
Աս-Սանյանիի վրայ արշաւեց՝ Ապտիլ
Մէլիք Իպն Ալ-Ճահաֆ Աս-Սուլամի, որ
ապստամբելով՝ Փայտախարանի ժողո-
վուրդին հետ պաշարեց Թահըրը Պարտաւ
քաղաքին մէջ, ուր պաշարուած մնաց քա-
նի մը ամիս:

Ալ-Մամուն այս դոյժն առնելուն՝ Հա-
յաստանի կառավարիչ կարգեց Սիւլէյման
Իպն Ահմէտ Իպն Սիւլէյման Ալ-Հաշմը:
Երբ Հայաստան հասաւ, արդէն Թահըր
պաշարուած էր, զինքն ազատեց ու ար-
ձակեց, Ապտիլմէլիքի ապահովութիւն
չնորհեց ու երկիրը խաղաղեցաւ:

Յետոյ Հայաստանի կառավարիչ կար-
գեց Հադըմ Իպն Հարթհամա Իպն Այեան,
որ երբ հասաւ՝ երկիրը ինկած էր բազ-
մաթիւ Մուղաղլ կոչուած Իսլամ աղան-
դաւորներու եւ մոլեռանդներու ձեռքը:
Զիրար կը սպաննէին, քիչ մնաց որ փճա-
նային, բայց յետոյ հաշտուեցան:

Հադըմ Իպն Հարթհամա քիչ օրեր մի-
այն Հայաստան մնալէ վերջ, լսեց հօրը՝
Հարթհամայի մահուան գոյժը եւ թէ ի՞նչ
պարագաներու մէջ մեռած էր: Այն ատեն
մեկնեցաւ Պարտաւէն ու բնակեցաւ Քիսալ
կոչուած քաղաքը, ուր բերդ մը չիկնեց եւ
ամէն ջանք ըրաւ պաշտօնանկ ընելու
(Մամունը):

Թղթակցեցաւ Հայաստանի իշխաննե-
րուն, նախարարներուն, Պապէքի եւ Խու-
ռամցիներուն, անոնց առջեւ ստորնացնե-
լով Իսլամներուն (Պալիֆային) հեղինա-
կութիւնը: Պապէք ապստամբեցաւ Խու-
ռամցիներու հետ ու տիրեց Ատրպատական
դաւառին:

Երբ Ալ-Մամուն լսեց, Հայաստանի կա-
ռավարիչ կարգեց Եահիա Իպն Մայատ
Իպն Մասլըմ՝ Տհահլիցի ցեղախումբէն սե-
րած ազատագրուած ստրուկը [...]: որ
այդ բանն ըրաւ: Եահիա Իպն Մայատ
քանի մ'անգամ պատերազմեցաւ Պապէքի
դէմ, առանց եւ ոչ իսկ մէկ անգամ յաղ-
թելու: Ալ-Մամուն տեղից Եահիայի գոր-
ծունէութենէն՝ Հայաստանի ու Ատրպա-